որ հետզհետէ գիւղացու կայքը՝ հողը ընկնում է վաշխառուի ձեռքը և այնուհետև նա դառնում է քաղաքացու արծաթագին ստրուկը:

Կան գիւղացիներ՝ որոնք յանկարծական պիտոյքի համար ծախում են իւրեանց ցանածի՝ աշնցանի կամ գարնցանի կանաչը՝ որովհետև այդ կանաչների արդիւնքը ակներև չէ՝ քաղաքացիք ամենաչնչին գներով տէր են դառնում գիւղացու քրտանց արդիւնքին՝

Երբ գիւղացին որևէ կերպով վտանգվում է՝ օրինակ եթէ գողանում՝ հափշտակում են նորա եզները՝ անասունները՝ կամ վարակիչ հիւանդութիւններից սատակում են՝ եթէ այրում են նորա դեզը և մարագը՝ եթէ երաշտից՝ մորեխից՝ մկներից ոչնչանում է նորա ցանքը այսպիսի հազար մի տեսակ հանգամանքներին ենթարկված գիւղացին՝ փոխատու ընկերութիւններ չը լինելուց՝ վերականգնելու մտոք՝ դիմում է վաշխառուին՝ դնում է նրա ոտի տակ իւր տունը՝ տեղը՝ կայքը հողի սեփականութեան իրաւունքը և ստանում է ցանկացած փոխը՝ այնպիսի պայմաններով և տոկոսով՝ որ երբէք չի կարողանալու հատուցանել ու այդպիսով գիւղական ընտանիքներ կործանվում են անկանգնելի կերպով՝ *)

*) Որքան որ գիւղերը աւելի մօտ են քաղաքին՝ այդչափով էլ աւելի խիստ ենթարկված են քաղաքացոց հա-